

ՏԱՍԵՆՆՈՐԳ՝ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կես տարվան 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց ամսագրատան մէջ:

Օտարապետացիք դիմում են ուղղակի
Կապույտ. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար գնալով են
խրոստանցիք թուին 2 կոպեկ:

ԲՈՂԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Կիրակեայ դպրոցները — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ս. Պետրոսեայցի: Նամակ Յարգիցի: Նամակ Իգգիլից: Նամակ Գանձակից: Նամակ Վաղարշապատից: Նամակ Երևանից: Ներքին լուրեր:— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Գերմանիա: Թիւրքիա: Տրանսիս: Արտաքին լուրեր:— ԽՍՈՆ ԼՈՒՐԵՐ:— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԿԻՐԱԿԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐ

«Մշակի» երեկվայ համարում ընթերցողը կարգացած կը լինի խմբագրին ուղղված պ. Քաթմանեանցի մի նամակ, որով պարտաւոր յայտնում է թէ կառավարութեան թողալու թեամբ բաց է անում Հալաբարում կիրակեայ ձրիակարժ դպրոցը հասակ առած անգրագէտների համար: Դպրոցը բոլորովին տարրական ուսման ընթացք կունենայ. այդտեղ հասակ առած, քսան տարեկանից սկսած մինչև քսուստուն տարեկան մարդիկ կը սովորեն հայերէն կարգալ գրելը և ազգային ու եկեղեցական տոները պատմութիւնը:

Հարկաւոր կը լինէր, մեր կարծիքով այդ ուսման պրոգրամային աւելցնել թաւաբանութեան առաջին չորս գործողութիւնները: Արքան օգտաւէտ են կիրակեայ դպրոցները մի ժողովրդի համար, որի ստորին դասակարգի մէջ տարածված է գրագիտութիւնը, ինքն իրան հասկանալի է: Մեր հասարակութեան մէջ հազարաւոր մարդիկ կան, մանաւանդ ստորին դասակարգին պատկանողները, որոնք երեխայութեան ժամանակ միջոց չունեցան յաճախել որ և է դպրոց, ուրեմն կատարելապէս զուրկ մընացին ուսումից: Այդ տեսակները, միջոց չունենալով մանուկ հասակում ուսում ստանալու, երբ հասակ են առնում ստիպված են լինում իրանց օրական աշխատանքով իրանց ապրուստը ապահովել և այնուհետև, իրանց կեանքի ամբողջ ընթացքում, այլ ևս ոչինչ միջոց և ժամանակ չունեն ստանալ որ և է, թէ և ամենատարրական ուսում:

Այդ տեսակների համար կիրակեայ վարժարանները լրացնում են այն ուսումը, որից ներքանք իրանց մանուկ հասակում զուրկ մնացին անաճող հանգամանքների շնորհով:

Չէ կարելի չը համակրել պ. Քաթմանեանցի գիտաւորութեանը և ցանկալի է, որ պարտնը

օգնողները զանի իր օգտաւէտ ձեռնարկութեան մէջ:

Կիրակեայ դպրոցների նպատակն է ստորին դասակարգի հասակ առած անգրագէտ մարդկանց սովորեցնել կարգալ, գրել և հաշուել և նոյնպէս ծանօթացնել կրօնի ամենատարրական ուսմունքների հետ, թէ կուզ եկեղեցական տոների կարճ բացատրութեան ձևով: Իսկ ազգային տոների բացատրութեան միջոցով ուսում առնող աննկատելի կերպով կը ծանօթանայ իր մայրենի պատմութեան հետ:

Ահա կիրակեայ դպրոցների համար պրոգրամը, առհասարակ, որ չը նայելով իր սահմանափակ և համեստ լինելուն, թէ խղճմտաբար կատարվի, ահագին օգուտներ կարող է տալ անգրագէտ դասակարգին, ահագին ծառայութիւն կարող է մատուցանել ժողովրդական բուստրութեան գործին:

Ի հարկէ դա գործի սկիզբն է և թիֆլիսի մի թաղի մէջ այդ տեսակ դպրոց բաւական է մեր ամբողջ քաղաքի անգրագէտ ժողովրդի համար: Յանկալի է որ քաղաքիս իւրաքանչիւր թաղում հիմնվէին այդ տեսակ դպրոցներ, ցանկալի է որ գտնվէին մեզանում պ. Քաթմանեանցի օրինակին հետևողներ և վերջապէս ցանկալի է որ և անդրկովկասեան միւս քաղաքները հետևէին թիֆլիսի այդ օրինակին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏՐՈՍԵԱՅԿԻ

Փետրվարի 18-ին

Ուսումնարանական շրջաններէ՝ հոգաբարձական ժողովի երրորդ նիստը կայացաւ փետրվարի 7-ին: Այդ նիստում քննութեան ենթարկվեցան այն բոլոր փոփոխութիւնները որոնց մտադրութիւն կայ մտցնել այժման քննութեան սիստեմայի ու հասունութեան ատեստատի մէջ:

Այժման քննութեան սիստեման, մանկավարժական խորհուրդների մեծամասնութեան կարծիքով, աշակերտաց աստիկ ճշուած է ու դժուարացնում: Այդ ճշուածը Հալաբարի զգալի լինում IV և VI դասատանց աշակերտների համար, ըստ որում նրանցից պահանջվում է հաշիւ — առաջիններից չորս, իսկ երկրորդներից երկու տարի: Այդ դասատանց աշակերտները տարուայ վերջում կրում են մի անտանելի դժուարութիւն, այն է պիտի պատրաստվին քննութեան համար այն ժամանակ, երբ նրանց ոչմէրը դասական պարտաւորութիւնները բաւական թուլացած են: Այն ինչ կարելի է բուրբովին և չը դիմել այդ քննութեան, ըստ որում ուսուցիչները տարուայ ընթացքում աշակերտաց բերանացի ու գրաւոր աշխատանքներից կարող են

կազմել իրանց համար կանոնաւոր համոզմունք թէ արժանի է արդեօք այս կամ այն աշակերտը դասատուն փոխելու — թէ ոչ: Վերջապէս թուանշանների սիստեման, որ այժմ քննութեան ժամանակ գործադրվում է, պիտի բուրբովին փոփոխվի: մի և նոյն ժամանակ ցանկալի է, որ դա մէջ մանկավարժական խորհուրդներին տրուի լայն ազատութիւն: Բացի դրանից, մանկավարժական խորհուրդները ենթարկուած են — 1) խափանել առարկաների բաժանումը զխորհուրդի և երկրորդականների, և ինչպէս տարուայ ընթացքում, նոյնպէս և քննութեան ժամանակ բոլոր առարկաներից պահանջել միապէս բաւարացուցիչ գիտութիւններ: 2) հասունութեան ատեստատի համար քննվողները, եթէ քննութեան ժամանակ գրաւոր աշխատանքից սպասան անբաւարար թուանշան — թող սովին բերանացի քննութեան: 3) ի դէպս հիւանդութեան կամ որ և իցէ յարգելի պատճառների թույլ տալ աշակերտներին մնալ դասատանը և երրորդ տարին: 4) քննութեանը թող տաւու ժամանակ մանկավարժական խորհուրդներին իրաւունք տալ, որ նրանք քննահանրապէս գիտնան աշակերտին ոչ թէ թուանշանների հիման վրա, այլ և այդ դէպքում ձեռնարկ ունենան խորհրդի համոզմունքը: 5) մանկավարժական խորհուրդներին տալ իրաւունք, որ նրանք կազմեն այն առարկաներից, որոնց մէջ աշակերտաց յաւաքովութիւնը քննութեան ժամանակ անբաւարար է երեացել: 6) բոլոր դասատուներում մինչև VIII դասատուն բերանացի ու գրաւոր քննութիւնները փոխարինել ընդհանրապէս ընդհանր: 7) եթէ քննութիւնները լինելու լինեն, այն ժամանակ V և VI դասատան աշակերտներին բոլորին ենթարկել քննութեան առանց բացառութեան և պահանջել այն միայն, ինչ որ անցել են մի տարուայ ընթացքում:

Հասունութեան ատեստատի քննութեան ժամանակ կանոնաւոր ու հանրամասնորէն տեղեկութիւններ պահանջել VIII դասատան կուրսի իւրաքանչիւր առարկայից, իսկ միւս դասատանց կուրսերից պահանջել միայն այն, ինչ որ նշանաւոր է ու գլխաւոր: Հասունութեան ատեստատի քննութիւն բունտի համար, եթէ նա որ և իցէ առարկայից կարելի է, կարելի է նշանակել լրացուցիչ քննութիւն երեք կամ չորս ամսից յետոյ: կարելի է թող տալ հասունութեան քննութեանը և այն աշակերտաց, որոնք վերջին տարուայ ընթացքում իրանց թույլ բնաւորութեամբ և անտարբերութեամբ դէպի իրանց աշակերտական պարտաւորութիւնները ցոյց են տուել իրանց բարոյական տնտեսութիւնը: Հասունութեան ատեստատի քննութեանը թույլ տալու ժամանակ ուշադրութիւն չը դարձնել այն կանոնի վրա, որի գործութեամբ թույլ չէ տրվում քննութիւն բունտի այն անձանց, որոնք թողել ու դուրս են եկել գիմնադրացից, կամ որ և իցէ ուսումնարանից և որոնք շարունակելով իրանց ուսումը դոցանում, չէին կարող վերջացնել իրանց կատարելա կուրսը գիմնադրանքի համար նշանակած ութ տարուայ ընթացքում:

Ժողովի անդամներից մի քանիսը յայտնել են այն միտքը թէ մանկավարժական խորհուրդները կատարել են իրանց պարտուր ու յանձնարարութիւնը և բացարձակ ու մինչև անգամ փոքրիկ աղօթատուն և այդ նպատակով ժողովել են նուիրատուութեամբ զանազան անձնաքննից դրամ: Բայց յետոյ միաձայն յօժարութեամբ, հիմնվելով շատ արժանի սկիզբներով վրա, որոնցից զլիաւորն այն է, թէ Յարգիլի մէջ հայերը զլիաւորապէս, սակաւ միայն բացառութեամբ, համարեա փոփոխելու ատեստատի պարտաւորներ են, այդ կառուցանուելիք աղօթատան յաճախողները պէտք է լինէին այդ հայերը, բայց որովհետև կովկասեան երկաթուղին պարտաւորում է արդէն և ոչ շատ հեռու ապագայի մէջ ֆոնո-ուսումնասիրութիւնը: Այժման դպրոցի սիստեման է — անհաշիւ յարգանք դէպի արտաքին

ձեր և արձանարձանը — դէպի ներքին բովանդակութիւնը: Հիանալի ու լայն պրոգրամներ, փառաւոր քննութիւններ, երեկի ատեստատ հասունութեան համար — ասա մեր ուսման նպատակը: ամենքը դիմում են այդ նպատակին ու նրա մէջ կորչում է կատարելա ուսումը, զարգացումը ու գիտութիւնը: Աշակերտաց ընդհանուր բնաւորութիւնն է թշնամութիւն և ատեստութիւն դէպի ուսուցիչները: Աշակերտների գլխի վրա միշտ կախած է դամկեան սուրը — քննութիւնները, յետոյ աստիկ ցանկութիւն շուտով ազատվելու այդ անարկու օրից, ուստի և դիմում են ամենայն տեսակ խարխալութեան: Էլ ինչ բարոյական զգացմունք պիտի դրայ ուսուցիչը դէպի այն աշակերտները, որոնցից նա իւրաքանչիւր բոլի խարխալութիւն է սպասում: Հատկանալի է, որ այդ դէպքում ուսուցչաց բարոյական աղղեցութիւնը աշակերտաց վրա տեղի չէ կարող ունենալ: Պահանջները աշակերտից այնքան շատ են, որ նրան կատարել նա չէ կարող, ուստի և նա ամենայն միջոցներով աշխատում է լաւ կիրպարանք տալ իր աշխատանքին, քան թէ իսկապէս է: Դպրոցը պիտի ընդհանուր զարգացում տայ, իսկ զարգացման առաջին նետանքն է պարտաւորութեանց ճանաչողութիւնը: այն ինչ աշակերտի վրա բարդվում են այնքան պարտաւորութիւններ, որոնց նա դժուարանում է կատարել և սրանով ուղղակի կորչում է աշխատանքի ամեն մի բարեխղճութիւնը: Այն անպիսի ու բազմատեսակ գիտութիւնները, որ պահանջվում են աշակերտներից, հիմնաւոր կերպով ձեռք բերել անկարելի է: հարկաւոր է պահանջները փոքրացնել և այն ժամանակ կրթութեան գործը լինելու ըստ ինքեան յաւաք կրթվալ: Այդ բազմատեսակ գիտութիւնները, որ պահանջվում են աշակերտներից, շուտով կը բխանեն ու կը ճնշեն դեռ չը զարգացած ու չը հասունացած միտքը, քան թէ նրան կը զարգացնեն:

Ասում են թէ այդ նիստում եղել են և ուրիշ կարծիքներ, թէ չէ հարկաւոր շեղվել համաշխարհային փորձից և հին լեզուները պիտի հիմն համարել գիմնադրական ուսման: Նոր եւրոպական ազգերի համար հին լեզուները այնպիսի մի ուժեղ միջոցներ են, որոնցով հեշտ կարելի է ծանօթանալ հին պատմութեան և հին փիլիսոփաների ուսման հետ: իսկ մանկավարժական կողմից դրանք ինքնուրույն աշխատութեան համար աւելի շատ նիւթ են տալիս, քան թէ միւս գիմնադրական առարկաները: կարողով հին նեղնալիները աշակերտը ինքնուրույն կերպով ծանօթանում է մարդկութեան պատմութեան ամբողջ շրջանի հետ, ուստի և նա կարող է կատարելա կերպով ենթարկվել մեր ինքնուրույն ու գիտական դաստիարակմանը:

Բայց թէ ինչ նետանքն եկան հոգաբարձուները ու խորհրդի անդամները — այդ թողնում եմ միւս անգամուսն:

Ա. Գալստեան

ՆԱՄԱԿ ՅԱՐԻՑԻՆԻՑ

Յունվարի 30-ին

Գանի տարի սրանից առաջ Յարիցինի հայերը իրանց մէջ ցանկացել են կառուցանելու մէկ փոքրիկ աղօթատուն և այդ նպատակով ժողովել են նուիրատուութեամբ զանազան անձնաքննից դրամ: Բայց յետոյ միաձայն յօժարութեամբ, հիմնվելով շատ արժանի սկիզբներով վրա, որոնցից զլիաւորն այն է, թէ Յարիցինի մէջ հայերը զլիաւորապէս, սակաւ միայն բացառութեամբ, համարեա փոփոխելու ատեստատի պարտաւորներ են, այդ կառուցանուելիք աղօթատան յաճախողները պէտք է լինէին այդ հայերը, բայց որովհետև կովկասեան երկաթուղին պարտաւորում է արդէն և ոչ շատ հեռու ապագայի մէջ ֆոնո-ուսումնասիրութիւնը: Այժման դպրոցի սիստեման է — անհաշիւ յարգանք դէպի արտաքին

պատճառ գլխաւորապէս տեղափոխուելու է Սև ծովը եղբարի նաւահանգիստ քաղաքները մէկի մէջ— հաւանական է Ռաթովը— յայնժամ այս հայերը ստիպուած պէտք է լինեն իրանց գործունէութեան շրջանը տեղափոխել Յարկիցիայ այն տեղը: Եւ դրանով արթնաւոր գոյութիւնը չընտանում է և այն դրամները, որ գործ էին դրած եղել նրա կառուցմանը՝ կորած և անտեղի են լինելու, մնալով անտեղ քամանակների հուսկեան մէջ միայն: հայոց աւերակների թիւը պէտք էր աւելացնելը— Սևա այս և ստրանման մի քանի պատճառներով ստիպուած ամիս 25-ին պ. Զաքար Յարովիչեանն իրաւիւնիկեանցի ամիսը ժողովելով՝ միաձայն վճարեցին որ թողնեն այդ արթնաւոր կառուցանելը և այն դրամները, որ մնում են յիշուել պ. իրաւիւնիկեանցի մտաւառարկեն մեր ամենից յարգված պ. Պօլիսի «Միացեալ ընկերութեան»-ը: Ներկայ գտնված անձինքներից ոմանք յայտնեցին թէ ցանկանում են իրանց նախարարութիւնը մէկ այլ բարեգործական նպատակի նուիրելու. այդ անձանց կամքը միաները յարգելով թող ստին. պ. Պապանովը ստացաւ իր նախարար 100 ռուբլին և իսկոյն յանձնեց պ. Նիկոլաւորեանցին հասցնելու Բաղրայ «Մարդասիրական ընկերութեանը» անփոփոխ անդամացութեան համար: (Այդ միջոցին մէկ անգը պատահեց, որը ցոյց է տալիս Յարկիցիի հայերի ետանդը— պ. Արամեանց յայտնեց որ այն 100 ռուբլին «Մարդասիրական ընկերութեանը» հասցնելու յանձն է առնում և 5 ռուբլի աւելացնում է միայն թէ ինքը տանի, իսկ պ. Նիկոլաւորեանցը 6 ռուբլի նուիրեց և ստացաւ հասուցանելու ընկերութեանը անփոփոխ անդամացութեան վճարը): Նիկոլաւորեանցը իր 200 ռուբլին յետ ստացաւ «Փարիզի Ռուսական անդամացութեանը» մշանջեաւոր անդամացութեան և երկու ռուբլիները 100, 100 ռուբլի իւրաքանչիւրը, դեռ յայտնի չէ ինչ նպատակի կը մտցնեն: Յիշուել 500 ռուբլին դուրս գալով, միացեալ փողը, որ 600-ից պակասում էր պակասը լըրին ոմանք ներկաներից և յանձնեցին պարուն իրաւիւնիկեանցին հետադրով բանիլի միջոցաւ փոխադրել «Մշակ»-ի խմբագրատունը, որպէս և միւս օրը կատարել է:

Այժմ, պարուն խմբագրատուն, ինձ պարտաւորած են այս նամակով յայտնել ձեզ, որ և դուք բարեհաճեք ձեր պատուական թերթի մէջ հրատարակելու ի գիտութիւն այն պարտնների, որոնք այժմ չեն այտուել:

Ա. Չարմախտազեանց

ՆԱՄԱԿ ԻԳՂԻՐԻՑ

Փետրվարի 1-ին

Ուղարկուած են ձեզ ի նպատակ վանի մեր հայ սովնալ եղբարներին 33 ռ. 32 կոպէկ, ինչպիսիքով հասցնել ուր հարկն է:

Այս գումարից 25 ռ. պ. Աղախան Կանայեանց նուիրեց իր որդու Աւետիսի հարսանիքի ուրախութեան առիթով, 2 ռ. տիկին Գայանէ Կանայեանց, 1 ռ. տ. Սողոմէ Կանայեանց, 90 1/2 կ. արժանագատիւ Տէր-Ստեփան Տէր-Թովմասեանց իր կատարած մի պատիւից:

Իր կողմից յաւելացնելով 5 ռ. և ճանապարհածախսը հանելով, ուղարկուած են ձեզ 33 ռ. 32 կոպէկ:

Իզգիւրիք որ ուրախութեան այսպիսի առիթներում նպատակ են իրանց կարողութեան չափ իզգիւրի երկեսա դարձրելով, ինչպէս պ. Ա. Կանայեանցը նուիրեց 19 ռ., ցանկալի էր որ պ. Աղախան Կանայեանցի ոման չը մտաւ նային և մեր հեռաւոր վանի սովնալ հայ եղբայրներին:

Ստ. Կանայեանց

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Փետրվարի 4-ին

Չը գիտեմ ուրիշ քաղաքի մարդիկ ինչպէս են վերաբերվում իրանց մէջ բնակվող այս կամ այն քաղաքի թղթակիցներին, սակայն ես կասեմ, որ այդպիսեաց գրութիւնը Գանձակում շատ նեղ և աննախանձելի է: Մեր քաղաքացի մի քանի պատուելի պ. պ., որոնց ղեկ ըստ մեծի մասին ուղղվում են նամակներ և որոնց անուշները պարզապէս թէն չեն յիշուած նամակների մէջ, այնուամենայնիւ նրանք իրանց պատկերը պարզ, ինչպէս հայերի մէջ, տեսնելով, փոխա-

նակ նամակների խմբագրութեան ուղարկուելու և իրանց գործը հրապարակաւ արդարացնելու, ըստ սուս ևն խոշորացցցով որոնել նամակագրին և այս դէպքում չը համարել իրանց չարանեց նըպատակներին, աշխատում են իրուր տեղը սրան կամ նրան զրգարուել: Ահաւորի գլխաւոր պատճառը, որ Գանձակում փոքր ի շատէ մտածող մարդը եթէ կամենում է մի անուրանալի ճշգրտագործութիւն երեսն հանել որ և է լրագրի միջոցաւ, բազմից անգամ ստիպված է լինում կամ մակնուշով, կամ զանազան տաւերի ստորագրութեամբ ուղարկել իր նամակը. նա աւելի աշխատում է այնպէս յարմարել տեղոյս հանգամանքների հետ, որ ընտա չենթարկվի պղպղի կասկածանաց:

Եւ անձ ասածին պէս մի տիւր պատկեր էլ ներկայացրեց լրագրից № 7 ներքին լուրերի մէջ հրատարակած մի գրութիւնը: Չեր թղթակից և իմ անձանթը բարեկամս օգուտ քաղելով այն հանգամանքից, որ ես թիֆլիս եմ գալիս, նոյն միջոցներին հաղորդում է ձեզ թէ՛ մեր քաղաքի հայոց դպրոցները շատ անմիթար դրութեան մէջ են, չորսով անընդհակ տեսուչներին, անփորձ վարժապետներին և վերին ստաճանի անհոգ և իրանց պարտը չը ճանաչող հողաբարձներին: Նա ստաճարկում է, որ ժողովուրդը իր իրաւունքները ճանաչի, հակելով հողաբարձներին անասնձ գործունէութեան նըրանց յանցաւոր կամայականութեան վրա և ուրիշ կողմից չը խնայի միջոցներ լաւ տեսուչ և օրինաւոր ուսուցիչներ բերել տալու համար: Այս արգաւաւ էլ առիթ են ստանում Գանձակում մի քանի բողոքները պարունելու լուր տարածելու իր թէ այդ տեղեկութիւնները ես եմ հաղորդել ձեզ:

Բողոքովին նպատակ չունենալով սոյն նամակովս հերքելու կամ ուրանալու աղիւն թղթակիցների ըստ մեծի մասին մեզմ և համեստար յայտնած դառը ճշմարտութիւնները, ես միայն կամենում եմ ծանուցանել թէ՛ այն օրից երբ ես թողել եմ դպրոցների չէմքը, մինչ ցարդ սոյնի նամակագրութիւն ուղարկելու խմբագրի հետ չեմ ունեցել որ և ինչ առարկայի վերաբերութեամբ:

Բայց և այնպէս իմ կողմից լարեկամար խորհուրդ կը տայի այս անգամ մեր դպրոցների մի քանի գերիմաստ վարժապետներին, որ նրանք փոխանակ «արհամարհանաց» արժանացնելու անձանթը բարեկամիս գրածը և սրա ու նըրա առաջ խունի ձեռնով, քաղաքի բառով շինուտ» անուանելով, զբաղաւորութիւններ անելու հերքելին պ. նամակագրի յայտնած մտքերը, հիմնվելով աւելի հաստատ փաստերի վրա, իսկ եթէ նրանք պղծ են, որ իրանց ձեռքով փոխանակ բարձրացնելու մեր դպրոցների անունը, աւելի պէտք է ստորացնեն, գոնէ թող խոհմասար լինեն...

Մ. Եպիսկոպոսեանց

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՔԱՊԷՏԻՑ

Փետրվարի 5-ին

Ստորագրութիւն բացանելով Վաղարշապատի հասարակութեան մէջ յօգուտ հայոց «Միացեալ» ընկերութեան, ինձ յաջողեցաւ ինձոյքներում և հարսանիքամտերում ժողովել մի փոքրիկ գումար, որը ուղարկելով ձեզ, խնդրում եմ, միծապատել խմբագիր, բարեհաճել այս փոքրը դարձնել ըստ իմ անձանթը բարեկամիս պ. պ. նուիրատուաց անուշներին 3 ռ., Մովսէս Վարդանեանց 2 ռ., Տէր-Վաղարեանց 2 ռ., Աղէք. Աւանեանց 2 ռ., Նիկոլ Մամիկոնեանց 2 ռ., Ա. Շարոբէ 1 ռ., Մ. Տ. Պ. 1 ռ., Մ. Մամիկեանց 1 ռ., Տ. Բըզնուշի 1 ռ., Վանո Աստարացեանց 1 ռ., Գրիգոր Մախատեանց 1 ռ., Փիլիպպոս Նաւասարդեանց 2 ռ., Վաղար Բարաշեանց 1 ռ., Կարապետ Գանձեանց 1 ռ., Յովհաննէս Կարճիկեանց 1 ռ., Շահրան Շահրանեանց 1 ռ., Յովհաննէս Շահրանեանց 3 ռ., Պերճ Պուշեանց 3 ռ., Գասպար Տէր-Գրիգորեան 1 ռ., Սահակ Գիւլը խանդանեանց 1 ռ., տ. Նիկոլաւոր Սարատեանց 1 ռ., Մարգար Միացականեանց 1 ռ., Աղէք. Էֆենդեանց 1 ռ., Վահան Օհանջանեանց 1 ռ., Չարար Սերէլեանց 2 ռ., Մարգար Սարտեանց 1 ռ., թ. Գ. Ս. 1 ռ., Նիկ. Գեորգեան 1 ռ., Ս. Սարգսեան 1 ռ., Վարդան Վարդիկեանց 1 ռ., Ա. Ներսէսեանց 1 ռ., Գար. Յովսէփեան 1 ռ.,

Մկրտիչ Գանձեանց 1 ռ., Խաչատուր Վարդիկեանց 1 ռ., Արսէն Տէր-Մարտիրոսեանց 1 ռ., Է. Թանգեանց 1 ռ., Գ. Էրզրեանց 1 ռ., Արշակ Շահրանց 1 ռ., Տիգրան Չահրանեանց 1 ռ., Սմբատ Զաքարեան 1 ռ., Աւետիս Մելիքեանց 1 ռ., Խաչատուր Շարաթեանց 1 ռ., Ս. Շահրանեանց 1 ռ., Ս. Ստեփանեանց 1 ռ., Յակոբ Զարեանեանց 1 ռ., Կիրակոս Վաղարեանց (սամաղաբի) 5 ռ., Զաքար Ետարեանց (Ալաւալու) 5 ռ., Նիկ. Արամեանց 1 ռ., Բ. Յովնաթանեանց 1 ռ., Ա. Տէր-Աւետիսեանց 1 ռ., Նիկ. Անտոնեանց 1 ռ., Պ. Յովհաննէսեանց 1 ռ., Նիկ. Շահրանց 1 ռ., Յարութիւն Ալիսանեանց 1 ռ., ընդամենը 74 ռ.: Այս գումարից 13 ռ. ժողովել է Պ. Ս. Վեղամեանցը, որից նոյն պարունի և նուիրատուաց ցանկութեամբ ծախսվել է մի այլ բարեգործական նպատակի համար 5 ռ., որը հանելով ընդհանուր գումարից, մնում է 69 ռ. փոստի ծախսը ընդունուած եմ ինձ վրա.— ստորագրութիւնը շարունակվում է:

Մ. Տէր-Պետրոսեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Փետրվարի 9-ին

Անցեալ 1880 թուականի վերջերում մեր քաղաքացի երեւելի գրամատէր պ. Վեդիկ Վաղարեանցը մի գեղեցիկ միտք յղացրից իր մէջ: Այդ միտքը Գաւառականներն աղբիւրից ծածկած առուով քաղաքը ջուր բերելու անհրաժեշտութիւն է, որ վաղուց ժամանակից զգալի է երեսնայնեւրի համար: Թէն չին ժամանակներից սկսած քաղաքի Կէմլը-Բուզը կոչվող թաղը մինչև այժմ ևս օգտուած է այդ աղբիւրի ջրի սի մասից, բայց քաղաքի և ակնիւնի մէջ եղած մտաւորապէս 15 վերստ հեռաւորութիւնը և առուի բաց լինելը պատճառ են լինում ջրի ապականութեան, որով յայտնի են քաղաքում հոսող միւս ջրերը:

Այս բարի և օգտակար միտքն իրագործելու համար, պ. Վ. Վաղարեանցի առաջարկութեամբ դեռ անցեալ տարի մի մասնաւոր յանձնաժողով կազմվեցաւ, որ պէտք է ջնջել, թէ արդեօք հարստութիւն է մի այդպիսի առուի գոյութիւնը քաղաքի համար, թէ ոչ: Յանձնաժողովի արձանագրութիւնից երևում է, որ Գաւառականներն աղբիւրից ջուր բերելու միտքը հարստութիւն է և աւելի յարմար կը լինէր, եթէ առուի սկիզբը վեր աւելիէր այն աղբիւրներից, որոնք բացառապէս ջրում են Աղաղորի և Արամեանց գաղտնի ու արտելու: Յանձնաժողովն այն կարծիք է, որ քաղաքի իրաւունք ունի օգտուել այդ աղբիւրի ջրից և այն ոչ թէ այնպէս, ինչպէս մինչև այժմ էր, ստանալով վերադարձներից մի քանի բաժնէ ջուր, այլ իւրաքանչիւր տարի բաժին վեր աւելի նայելով աղբիւրների մէջ եղած ջրի առատութեանը:

Պ. Վ. Վաղարեանցը, հիմնվելով յանձնաժողովի եղբարացութիւնների վրա, վերջին օրերում մի յայտարարութիւն տուց Գաղաքային խորհրդարանին, որ սա խորհրդակցութեան ենթարկել ջրի այդ հարցը, որը բաւարար վճարելու համար Սա իր կողմից առաջարկուած է 10,000 ռուբլի: Սա մի անհերքելի պարզ ապացոյց է մեր գրամատերի և ձայնաւորի բարեգործութեան, որի մասին գոչել մինչև այժմ կասկածելով էին խոսում մեր քաղաքացիները: Եթէ այդ 10,000 ռուբլու վրա աւելացնենք դարձեալ մի տասն հազար ռուբլի, այն ժամանակ համարձակ կարող ենք ասել, որ Գաւառականներն աղբիւրից յրատակ ջուր բերելուց և քաղաքի մի քանի մասերում բաժանելուց յետոյ, մինչ կազմուի քաղաքի քաղաքացիական խորհուրդը, որոնք շատ անգամ հիւանդութիւնների գլխաւոր պատճառ են դառնում: Որտեղից աւելացնենք մնացած տասն հազար ռուբլը, գոչել հարցնեն մեզանից: Մեր պարուն իրաւաւորները, որոնք քաղաքի ներկայացուցիչ են համարվում, իրանց մասնաւոր օժանդակութեամբ կարող են զուով բերել գործը: Նրանցից զիցուք 20 հոգի վճարելով ամեն մէկը 500 ռուբլ, թող լրացնեն այդ գումարը, այն պայմանով, որ մի երեք կամ վերջապէս չորս տարուց յետոյ ստանան իրանց փողը սոխտով: Այդ պայմանաւորով տուած հոգով, առուն քաղաքը բերելուց յետոյ, շատ կարեւոր կարելի է ստանալ քաղաքի հասարակութիւնից առանց ծանրաբեռներու նրան: Այսպիսով թէ դուք, պ. պ. իրաւաւորներ, քաղաքի խմբագրի ներկայացուցիչներ կը համար-

վէք և թէ քաղաքը արժանացած կը լինի յստակ և մաքուր ջուր խմելու և օրհնելու ձեր անցեալ գործունէութիւնը քաղաքի օգտին: Բայց որովհետեւ այդ դէպքում պ. Վեդիկ Վաղարեանցի արած ծառայութիւնը շատ մեծ կը լինի քաղաքի համար, ամենքս ամենայն իրաւամբ առուի չինութիւնից յետոյ, կը ստնք նորան Վեդիկեան անունը:—Ապստում ենք խորհրդարանի շտապովից վճարել:

Յովհաննէս-Նիկոլ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ամիս 19-ին ՉԱԲԱԹԱՒԻ հայոց եկեղեցում, ինչպէս մեզ գրում են, կատարվեցան Թագաւոր Կայսրի գահակալութեան տօնի առիթով մարթնաթաների և ազա վարդանանց պատերազմի նահատակների յիշատակին հոգեհանգրստ:

ՍԱԼԵԱՆԻՑ մեզ գրում են փետրվարի սկզբներից հետեւելը: «Անցեալ 1879 և 1880 թվերի թանգութիւնից օգուտ քաղելով, մի քանի պարուններ մեծ քանակութեամբ առան ցորեն և գարի և այլ իրանց ամբարներում, յոյս ունենալով մեծ քանակութեամբ ամբարներում, մեր չարչիւնները ժողովրդի վրա: Բայց նրանք սխալվեցան. աշան ցորենը աջող եղանակների պատճառով մեծ բերութեամբ խոստանալով, մեր չարչիւնները ստիպվեցան իրանց ղեկած ցորենն ու գարին էժան դնելով ծախել ժողովրդի վրա: Այդպէս, օրինակ, 1 ռ. և 40 կոպէկով գնված ցորենի պուզը այժմ սկսեցին վաճառել 1 ռուբլով, իսկ 1 ռուբլովով գնված գարին վաճառու են 50 կոպէկով: Ժողովուրդը գոհ է, իսկ վնասի ենթարկվող հարստահարողները սկսում են հաւատալ որ նախախնամութիւնը պատժուած է նրանց իրանց մեղքերի համար»:

ԱԼԷԲԱՆԻՑԻՐԱՊՈՒՄՈՒՑ մեզ հաղորդում են հետեւելով գրում կենսական գլխաւոր պիտոյքների վրա, որոնք այդ քաղաքում օրից օր ընկնում են, ինչպէս մեզ գրում են: Այլուր սուրբ արժէ 1 ռ. 60 կ. իւղը 14 մինչև 16 ռուբլ. թիւած հարց 5 կոպ. Ֆուստը: Միայն միտք թանց է, օրինակ ոչխարի մի ֆունտը 10 կոպէկ, սոււրբը 8—10 կոպէկ: Պանրի պուզը արժէ 4 ռուբլ:

ՄԵՂ գրում են ԱՍԱՅՍԻՍԻՑ հետեւելով: «Մշակ» համարները մեծ համակրութեամբ են ընդունվում քաղաքի հայ-կաթողիկոսների շրջանում: «Մշակը» ազգային օրգան է, նա պաշտպան է և լուսաւորական, և կաթողիկոս և բողոքական և մասնաւորապէս հայերի հասարակական և բարոյական շահերի: «Մշակը» ազգային միութիւն է քաղաքում:— հետեւեք նրան: իսկ նրանք, որոնք կատրութեան պատճառով—այդ տեսակ օ գ տ աւել տ գործիչներին, եթէ ժամանակակիցները չիմանան գն ա ճ ա տ ե լ, նրանք իրանց արժանաւոր վ ա բ ճ ա պ պ ա գ ա լ ու կը ստանան աղբից, երբ աղբը կը հասնի իր ինքնահասանգութեանը»:

Մի հաւաքացի պարուն մեզ հաղորդում է հետեւելով: «Հաւաքացի Աւետիք Ծատուրեանը, վախճանովելով 1869 թվին, կտակեց էջմիածնեցոյ եկեղեցուն 2,000 ռուբլ: Հանդուցեալի ժամանակները, քանի մի ժամանակ անցած նրա մահից յետոյ բերեցին մի քանի սալ կիր և ածեցին եկեղեցու գաւթում, իբր թէ պարկոյ շինելու դիտաւորութեամբ: Բայց անա 1881 թիւն է և մինչև այժմ ոչ պարսպի չինութիւնն է սկսված, ոչ էլ կտակը կատարված: Ո՛ր է 2,000 ռուբլ գումարը: Հարցնող չը կայ»:

ԱԹԱԼԻՍԻՑ մեզ գրում են: «Բունդարի 24-ին վախճանովեցաւ այտուղի պատուաւոր և պատկառելի 66 տարեկան ծերունի, մահոտի Գրիգոր Տէր-Վերակոսեանց: Հանդուցեալը յայտնի էր, որպէս քաղաքի բարեգործ և բարիխղճ անձինքներից առաջինը: Նրա չորսով չըբաւ պերդատաններից շատերը ապրում էին և նրանցից մի քանիսը պայտուոված են այժմ: Հանդուցեալը կտակեց իր կարողութիւնը իր միակ ժաւանդ պ. Յովհաննէս Տէր-Վերակոսեանցին, պատուիրելով նրան չինել Արարաւաքում մի հոյակապ եկեղեցի, 200 ռուբլ նուիրել տեղիս երկեսա դպրոցներին և 100 ռուբլ քաղաքի աղ-

քանակներն: Բայց եւ համարձակում եմ համեստ մի խորհուրդ տալ պ. Յովհաննէսին, այն է որ փոխանակ Ախարաբաբում մի հոյակապ եկեղեցի շինելու, որտեղ մենք ունենք արդէն մի այնպիսի եկեղեցի, որ կարող է մեր փառքի քաղաքի ամբողջ հայոց հասարակութիւնը իր մէջ բովանդակել, լաւ կը լինէր որ յարգելի պարոնը գործ դնէր նոյն դումարը, որ պէտք է գործ դրվել եկեղեցու շինութեան վրա, մեր քաղաքում մի գեղեցիկ դպրոց կառուցանելու վրա, քանի որ մեր արդարեւ պարտքը խարխուլ շինութեան մէջ է դանդաղ, իսկ օրիորդաց դպրոցը իր սեփական բնակարան չունի էլ, այլ ստիպված է վարձել բնակարան մասնաւոր տան մէջ և ամեն ամբողջ ամիսով թափառել մի տեղից միւս տեղ: Երջ ունեմ որ մեր քաղաքի հայ հասարակութիւնը, հասկանալով իմ խորհուրդի օգտակարութիւնը, այդ մասին խնդրեալ կը դիմէ պ. Յովհաննէսին:

ԲԱՊՈՒՅՑ մեզ գրում են որ այդ քաղաքի մի քանի հայ կապիտալիստներ շատ անխելճ կերպով վարվում են իրանց տան մէջ խանութ կամ բնակարան վարձողներին հետ: Երբ վարձողը, պայմաններ բերանացի կերպով որչա՛ր լուց յետոյ, գետեղում է իր նոր վարձված բնակարանի կամ խանութի մէջ, յանկարծ կապիտալիստը կանչել է ասլիս վարձողին և յայտնում է նրան որ մի ուրիշը կայ, որ կրկնակի գին է ասլիս նոյն խանութին կամ բնակարանին և եթէ դա էլ չաւելացնէ, պէտք է դուրս գնայ: Վարձողը ճարձատրված մնում է, աւելացնելով քրէնը:

Յիշեցնում ենք «Մշակի» բաժանորդներին որ երբ որ նրանք կամենում են իրանց հասցէն փոխել, պէտք է ուղարկեն վերջին բանդերովից կտրած տողված հասցէն, պէտք է նշանակեն նրա վրա նոր բաղադր և նամակի հետ անպատճառ ուղարկեն և օթ կ օ պ է կ ա ն ոց երկու մարկա, որպէս ծախս նոր աղբիւս տալու համար: Եթէ ոչ, հասցէն չենք փոխի:

Բժիշկ Նաւասարդեան խնդրում է մեզ յայտնել որ «Հայոց բարեկրթական ընկերութեան» կանոնադրութեան ծրագիրը քննելու համար կը կայանայ հինգերորդ ժողով Արծրունու թատրոնում, մարտի 1-ին, կիրակի, առաւօտեան ժամի 11-ին: Եթէ այս նկատը վերջինը լինի, կընտրվեն և ներկայացուցիչներ, ընկերութեան ծրագրի հաստատութիւնը կառավարութեան ստանալու համար:

Մեզ խնդրում են յայտնել որ ամենալաւ հասցէն է Վիլհելմայի կ ւ հ կ ա ռ ա ս ի ն ե ր (մէքէլ), կարելի է ստանալ Արծրունու գաղթէնում գտնված, նոր բացված հարուստ պահեստի մէջ, № 144 մագաղիսում: Այդ պարանքները կարելի է ստանալ թէ մաս մաս և թէ մեծ քանակութեամբ (օպտով):

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լրագիրների մէջ տպված է Միւնխենից հաղորդած լուրը այնտեղ պատահած հրդեհի մասին: Գեղարուեստական ակադեմիայի աշակերտները և իրանք նկարիչները մի բալ կազմեցին զգեստներով, որ ներկայացնում էր բոլոր ազգերի գարնջատները: Ի միջի այլոց պէտք է ներկայացվէին նոյնպէս և էսկիմոսները, որոնց հագուստները, ձիւնի նմանութիւն ունենալու համար, շինված էին վուշից և բամբակից: Չը նայելով որ արգելված էր ձիւնի դահլիճների մէջ, նկարիչները մէկը լուցկիով վառում է իր ձիւնախոտը և լուցկին պատահմամբ գցում է էսկիմոսի հագուստ ունեցող մի նկարչի վրա, որի հագուստը սկսում է այրվել: Միւս նկարիչները վազում են այրվողն օգնելու համար, բայց նրանց հազուադէպ էլ պատում են կրակի բոցով: Մարդկային այդ հրդեհը տեւեց ընդամենը 20 րոպէս, մինչև հասան հրդեհաշէջները, բայց այնու-

ամենայնիւ քննադեցան 30 մարդիկ: Կրանցից 14 մարդ ուղարկվեցան հիւանդանոց, որտեղ 8 խիղջ մեռան: Մնացածները մի քանիսը մեռել են, միւսները մերձ ի մահ հիւանդ են:

Այդ անցքից երկու օր յետոյ մի մեծ հրդեհ պատահեցաւ Շառախի մէջ, որտեղ այրվեցաւ հրէաների ամենահին և չափազանց հարուստ սինագոգան: Նախկին օրը հասել էր Շառախի յայտնի հրէատեսաց Գեներալի «հրէաների դեմ ստորագրութիւններ հաւաքելու համար» Նա մի մեծ միտինգ կազմեց, որին մեծ բազմութիւն ներկայ գտնվեցաւ: Միտինգի վերջնաւոր ժամանակ երկու ծրարներ ստացվեցան, որոնց մէջ գրված էին բրոշուրներ և յօդուածներ հրէաների դեմ: Այդ բրոշուրները խիղջ բաժանվեցան ներկայ գտնվողներին: Շառաքը կարծում են, որ այդ միտինգին մասնակցող քրիստոնեաները հրդեհ են զցել հրէական սինագոգայի մէջ:

ԹԻՒՐԿԻԱ

Կ. Պօլսից «Polit. Corresp.» լրագրին հեռագրում են փետրվարի 24-ից: Պետութիւնների դեսպանները դեռ ևս ոչինչ պատասխան չեն ստացել Բ. Գոսից այն զիջումների մասին, որ նա պէտք է անէ Գունաստանին: Մի և նոյն ժամանակ դեսպաններն էլ այնպիսի մի համաձայնութիւն չեն կայացրել, որ կարողանային որոշել յոյն-թուրքական սահմանները և յայտնէին, թէ Եւրոպայի վերջնական կամքն է, որ այդ սահմանը ընդունի Բ. Գոսը: Գնապանները Եւրոպայի այդպիսի կամքը կը յայտնեն միայն այն ժամանակ, երբ յայտնի կը լինեն Բ. Գոսի առաջարկութիւնները: Գունաստանին այլ ևս յայտնած չէ, որ նա չը սկսի թշնամական զործողութիւններ: Պետութիւնների ներկայացուցիչները Աթէնքի և Կ. Պօլսի մէջ միայն մասնաւոր խորհուրդներ են տալիս այդ մտքով: Փետրվարի 25-ին Կ. Պօլսի մէջ լուր տարածվեցաւ, որ թիւրքաց մինիստրների խորհուրդը արդէն որոշել է սկզբունքով այն զիջումները, որ թիւրքերն պէտք է անէ Գունաստանին: Խորհուրդի վճիռները կը յայտնվեն սուլթանին և եթէ նրա հաւանութիւնը կը ստացվի, նրանք կը հաղորդվեն դեսպաններին: Խորհուրդի վճիռների բնաւորութեան մասին դեռ ոչինչ յայտնի չէ, միայն կառավարչական շրջանները կարծիք են յայտնում, որ Գունաստանին անելու զիջումները փառաւորապէս կապացուցանեն Եւրոպային, թէ թիւրքերն խաղաղաօր նպատակներ ունին: Ի նկատի առնելով պետութիւնների միջնորդութիւնը, Բ. Գոսը Էպիրոսի և Թեսալիայի մէջ գտնված թիւրքաց զորքերի հրամանատար դեռ չէ նշանակել:

Քէյտերի ընկերութեանը Կ. Պօլսից հաղորդում են: Այստեղի դեսպանատանի մէջ ոչինչ տեղեկութիւն չէ կարելի ստանալ կատարվող բանակցութիւնների վերաբերութեամբ, որովհետեւ դեսպանները կարծիքով գործերի փոխադարձ զրուցումները խիստ զարմարապատիւն են և պահանջում: Գնապանները ուսումնասիրում են Բ. Գոսի տրամադրութիւնը և մտաւորապէս գուշակում են այն զիջումները, որ նա մտաւոր է անել Գունաստանին: Ամենքին յայտնի է, որ թիւրքաց կառավարութիւնը երբեք չի համաձայնի յանձնել Գունաստանին Պրեզիդէնտ, Եանինա և Մետոջօ: Այն ժամանակից, որ դեսպանները յանձնել են Գոսի իրանց գրութիւնները, թիւրքաց

մինիստրները չորս անգամ խորհուրդ են կազմել: Մինիստրների մեծամասնութիւնը այն կարծիքի է, որ աննշան բաներ պէտք է աւելացնել այն զիջումների վրա, որ արել է Գոսը հօտեմբերի 3-ի իր շրջաբերականով, իսկ Պրեզիդէնտ, Եանինա, Մետոջօ և Լարիսա Թիւրքերն անպատճառ իր համար պէտք է պահէ:

ՖՐԱՆՍԻԱ

Վերջին ժամանակներում Ֆրանսիական լրագիրները հաղորդեցին, որ Գունաստանը Ֆրանսիայից զէնքեր է գնել: Այդ պատճառով Ֆրանսիական պատգամաւորների ժողովի և սենատի մէջ հարցեր առաջարկվեցան կառավարութեանը: Նորերում «Gaulois» լրագիրը տպեց Հայրբոնների նամակը, որը Գունաստանի համար զէնք գրանդ առեւտրական տան կառավարչին է: Այդ նամակը հետեւեալն է: «Նորերում յունական կառավարութիւնը առաջարկեցինձ զբաղվել Գունաստանի համար զէնքեր և պատերազմական պաշարներ գնելով: Ես ուրախութեամբ ընդունեցի այդ առաջարկութիւնը և գնեցի պետական գինապահասների մէջ, ի միջի այլոց և Վինսնի մէջ, բազմութիւն փամփուշտներ և 50,000 Շասպօի ձէլի հրացաններ, որոնք այժմ Ֆրանսիայի մէջ փոխարկված են Գոսի հրացաններով: Այդ առեւտրը կատարեալապէս օրինական կերպով կատարվեցաւ: Գործածութեանից դուրս եկած զէնքերը միշտ կարելի էր ծախել մինչև անգամ սահմանից դուրս ամենուրեք համար: Իւրաքանչիւր հրացանի համար ես 12 Ֆրանկ վճարեցի: Մինչև այդ ժամանակ գործը աջողութեամբ էր կատարվում և այդ ձեռնարկութեան մասին ոչ ոք ոչինչ չը գիտէր: Այդ բոլոր զէնքերը փարկից երկաթուղով Հավր ուղարկվեցաւ, բայց այն նաւը, որի վրա պէտք է գնվէր այդ բոլոր, դեռ ևս Հավր չէր եկել: Մեր առեւտրական տան գործակատարը իշխանութեանից թողաւ թիւն ինդրեց, որ այդ բոլոր առ ժամանակ նաւահանգստի այն տեղերը դարսվին, որտեղ նաւերը նորոգվում են: Այդ հանգամանքը մեծ ազդու է բարձրացրեց: Առեւտրական դատարանը չը սուեց իր համաձայնութիւնը և նրա բողոքը այնպէս մեծ նշանակութիւն ունեցաւ, որ Բուսնի պրեզիդէնտը գրա մասին տեղեկութիւն տուեց ներքին գործերի մինիստրին և բեռը պահվեցաւ: Հավրի մէջ մինչև մինիստրի այնտեղ հասնելը: Այս է եղելութեան գործնական կողմը: Նորերում ես տեսնվեցայ մինիստր Ժիւլ Ֆերթիի հետ և գործին վերաբերվեցայ իբրև առեւտրական մարդ, որովհետեւ ես երբեք չեմ եղել մի այլ կառավարութեան գործակատար: Կառավարութեանը յայտնի չէր, որ ես զէնքեր եմ գրանել, որովհետեւ ես համաձայնութիւն կատարել գտնադան գինապահասների գրեթե կտորների հետ: Կառավարութիւնը այդ գործի մասին տեղեկութիւն ստացաւ Բուսնի պրեզիդէնտի հետագրից:»

Ընդհանրապէս լրագիրները չեն հաւատում, որ պետական գինապահասները այդպիսի մի նշանաւոր գործ կատարելիս առանց կառավարութեան գիտութեան և հրահանգների:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգի պարսից դեսպանութիւնը զը-

բաղրութիւն սկսեց մեր արաբքին գործերի մինիստրութեան հետ, որով Պարսիստանը պահանջում է թիւրքաց կառավարութեանից յանձնել իրան քիւրդերի առաջնորդ չէյն Իբրաիմը: Շահի կառավարութիւնը, Պետերբուրգի իր դեսպանի միջոցով, խնդրում է Բուսաստանից այս զէնքում օգնութիւն, զարեցնելու քիւրդերի աւազակային յարձակումները, որոնք մեծ վնաս են տալիս ուսուցչական թիւրքիայից նոր ձեռք բերած Կարսի նահանգում և ազատ վաճառականութեանը Պարսիստանի և Թիւրքիայի սահմաններում:

Լրագիրները հաղորդում են, որ Կէմբրիջի անգլիական համալսարանի խորհուրդը վճռել է թոյլ տալ կանանց ուսանող դրվել համալսարանում և աղամարդկանց հետ հաւասար իրաւունքներ վայելել թէ դասախօսութիւնները լսելու և թէ հարցաքննութիւնները տալու մէջ:

Կ. Պօլսի «Հայրենիք» լրագիրը կարգում ենք հետեւեալը: «Չէլսիւնի ազգային ժողովուրդանէ պատրիարքարան զրկված զիր մը կայսերական զօմիսներու որոշած բարենորոգմանց փոքր մաս մը միայն գործարկված, իսկ մեծ մասը տակաւին անգործարկի մնացած ըլլալը յայտնելով, կը խնդրէ որ պատրիարքարանը այս մասին հարկ եղած խնդիրն ընէ առ կայսերական կառավարութիւնը: Այս խնդրոյն համար թագրի գրվեցաւ առ Բ. Գոսին:»

Փետրվարի 25-ին Փոքր-Ասիայից Կ. Պօլսում ստացված տեղեկութիւնները համեմատ, Գաուրանան շրջանի լեռներում գրու զնէրի նոր պատարութիւն է ծագել: Գրուները զիջելով յարձակվեցան մի քանի տեղերի վրա և 70 հոգի սպանեցին: Քրիստոնեաներից և մասնաւորապէս ընդ: Այս գաղանկութիւնները ստիպեցին վերադառնալ կառավարչին Գաուսիստում շտապով զօրքեր բերել տալ:

«France» լրագիրը հաղորդում է, որ Գունաստանը դիմել է Անգլիային, խնդրելով անմիջապէս պաշտպանել յունական շահերը, բայց Անգլիան մերժել է այդ խնդրքը, ասելով, որ պետութիւնների դեսպաններին Կ. Պօլսի մէջ յանձնված է համաձայնութեամբ գործել, այնպէս որ անկարելի է փոխել բանակցութիւնների կենտրոնը կամ նրանց բնաւորութիւնը:

Փարիզի մէջ լուր էր տարածվել, ինչպէս հաղորդում են լրագիրները, որ Ֆրանսիական կառավարութիւնը Գունաստանին 30,000 հին հրացաններ է ծախել: Այդ գործի մասին Ֆրանսիական թէ պատգամաւորների ժողովի և թէ սենատի մէջ հարցեր առաջարկվեցան կառավարութեանը: Թէպէտ յայտնվեցաւ, որ այդ լուրը մասամբ ճիշդ է, այնու ամենայնիւ երկու ժողովներն էլ հաւատարմութիւն յայտնեցին կառավարութեանը:

Թ Ա Ռ Ն Լ ՈՒՐ ԵՐ

Կանանց բարձր ուսման պահանջը նկատվում է մինչև անգամ Հնդկաստանում: Երկու երիտասարդ տեղացի կանայք սկսում են համալսարանական քննութիւններ տալ: Բոսնի լրագիրները հաղորդում են, որ մի օրիորդ ցանկութիւն է յայտնել քննութիւն տալ վարչական պաշտոնեայի իրաւունքը ստանալու համար, իսկ մի ուրիշ օրիորդ խնդրել է թոյլ տալ իրան Բոսնի համալսարան մտնել, իբրև ուսանող: Հետեւեալը դեռ ևս յայտնի չէ:

Փարիզը մեծ պատրաստութիւններ է տեսնում Վիկտոր-Հիւգօի 80 ամրակայ ծննդեան տօնախմբութեան համար: Նրան մտադիր են ընծայել օսկէ-գամինեյ պատի, որի տերերի վրա գրված կը լինեն Վիկտոր-Հիւգօյի հեղինակութիւնների վերնագիրները: Այդ օրը սպասվում է զանազան նահանգներից ներկայացուցիչների մեծ բազմութիւն: Փարիզի բոլոր թատրոնների դերասանները գնալու են երեկի հեղինակի տունը, անձամբ չնորհաւորելու նրան, զգեստաւորված լինելով նրա հերոսների հագուստներով: Ի յիշատակ այդ օրվայ յօրինված կը լինի մի բրոնզեայ մեդալ:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ОБЪ ИЗДАНИИ

сб апрѣля 1881 года въ г. Тифлисъ еженедѣльнаго юридическаго журнала

ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ

Журналъ будетъ выходить по ЧЕТВЕРГАМЪ, въ размѣрѣ до 2-хъ печатныхъ листовъ, по слѣдующей программѣ:

- Отдѣлъ I. Статьи по теоріи и практикѣ права и судопроизводства.
- Отдѣлъ II. а. Извлечение изъ приказовъ о важнѣйшихъ назначеніяхъ по вѣдомству Юстиціи въ Имперіи.
б. Перечень и краткое изложеніе важнѣйшихъ распоряженій и узаконеній правительства.
- Отдѣлъ III. а. Краткіе отчеты о засѣданіяхъ въ судахъ Кавказскаго Намѣстничества. Въ случаяхъ особенно важныхъ—стенографическіе отчеты будутъ издаваться въ видѣ особыхъ приложений къ журналу.
б. Тезисы изъ руководящихъ рѣшеній Тифлисской Судебной Палаты по дѣламъ, разрѣшеннымъ ею въ кассационномъ порядкѣ. Въ случаѣ надобности здѣсь же будетъ помѣщаемъ и текстъ самыхъ рѣшеній.
в. Особенно интересныя рѣшенія гражданскихъ судовъ Кавказскаго Намѣстничества. Преимущественно тѣ рѣшенія, коими разрѣшаются какія либо вопросы права и судопроизводства, вызванныя мѣстными особенностями Кавказскаго края.
г. Корреспонденціи юридическаго содержанія.
- Отдѣлъ IV. Перечень новыхъ книгъ юридическаго содержанія. Редакція по возможности будетъ представлять и краткіе отчеты объ этихъ книгахъ.
- Отдѣлъ V. Смѣсь. Мелкіе случаи изъ судебной жизни и практики.
- Отдѣлъ VI. Судебный указатель. Резолюціи Тифлисской Судебной Палаты по дѣламъ апелляціоннымъ и кассационнымъ.
- Отдѣлъ VII. Тезисы изъ вновь выходящихъ рѣшеній Кассационныхъ Департаментовъ Сената.
- Отдѣлъ VIII. Объявленія.

Журналу обѣщали свое сотрудничество, сверхъ многихъ лицъ судебного вѣдомства: Ф. К. Бакало, О. А. Бяковъ, В. М. Горбовакскій-Заранекъ, Н. А. Димельштетъ, В. И. Канатовъ, П. В. Макашкскій, Я. И. Рахметъ, В. А. Селитренниковъ, П. П. Соколовъ, Е. Д. Стрѣльбицкій, А. С. Френкель и др.

Редакція журнала—по Ново-Бebutовской ул., д. № 6.—Администрація (для приѣма подписки, объявленій и розничной продажи)—близъ Головинскаго проспекта, по Безыменному пер., д. Тамамшева.—Подписная цѣна на журналъ, съ доставкой и пересылкою, на годъ—10 р., на 9 мѣс.—8 р. 20 к., на 6 мѣс.—6 р., на 3 мѣс.—3 р. 20 к., на 1 мѣс.—1 р. 20 к.—Подписаться можно съ 1-го числа каждаго мѣсяца.—Отдѣльные номера—по 25 к.—Объявленія, казенныя и частныя, по таксъ за занимаемое мѣсто.—Иногородныхъ просятъ обращаться исключительно въ Администрацію журнала.
Издатель А. Френкель, присяжный повѣренный. Редакторъ А. В. Степановъ

ՀԵՄՕՐՈՒԻՆԿԵՆ ԲՈՒՍԿԵՆ ՀԵՂԵՆԻԹ փորձված և առաջարկված պրոֆեսոր բժշկի կրճԵՎՈՎՍԿՈՒՑ շատ զեղեցիկ միջոց է ԱՍԿՄՈՒՐՍԻ ԶԵՆՆԵՐԻ զէմ, մաքրում է և շատացնում է ԵՐԻՆԵՆ, վերականգնում է ՄԵՐՄՆԻ ընդհանուր հարմունեան, մանաւանդ առաջարկվում է Հիմնորի և Իպսիսոնդրիա ՀԻՆԵՆԻՈՒԹԵՆԵՆ զէմ: Մի շիջ, գործածելու խրճԵՆԵՐՈՎ 1 ր. 80 կ.: Օտարաքաղաքացիք ուղարկում են ՓՕՍՏԻ ծախսը: Ծախվում է Ռուսաստանի ԲՈՒՈՐ ԴԵՂԱՏՄԵՆՆԵՐԻ մէջ և զեղերի պահանջներին մէջ: Պահեստը Մօսկվայում է, Ն. Մատենսէ յսի մօտ, Տվերակայա փողոց: Կիշնէօվի մէջ Կայուշանսկու և Բրայունշտէ յսի մօտ: Վարչակայի մէջ Ա. Փ. Գալչէի մօտ: 20—25 (5)

Մինչև այժմ չեղած ԵԿԵՆՁԻ ԻԻՂ ԲԺԻՇԿ ԸՄԻԳՏԻ, որ կատարելագործված է բժշկի ՄԵՎՐԻՎԻԹ ԴԵՑՉԻՑ: Եռոցյացնում է ամեն տեսակ խոլերիկներին, եթէ նա բնական չէ: ԵՐԵՔ ԲՈՒԻՆ ԸՍՏԱՆԱՐՈՅ յետոյ ուղարկվում է ՄԻՇՇ, այդ իւղից, մանրամասն խրճԵՆԵՐՈՎ, գործածութիւն մասին: Եյդ իւղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՄԵՆՆԵՐԻՑ և Ելէքսանդր ՎԵՆՑԵԼԻՑ, Կազանսկայա փողոց № 3: 32—52

Վ.Ա.ՀԱՌՄԱՆ ԳՆԵՐՈՎ և մեզ վայ պարտներ 12 ր., Ֆուֆայկաներ 2 ր. 50 կ., գլխարկներ 1 ր., մատուցարաններ 5 կոպէկ, ամաններ հատը 12 կ., հնդկական բրինձ 10 կ. Ֆուստը: Անգլիական կոնֆեկաներ 40 կ., իսկ թէյ, որի ֆուստը ամեն տեղ 2 ր. 50 կ. արժէ, 1 ր. 80 կ. է ծախվում ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԻՈՒՄ: Լոյս տեսաւ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ Յարուած թիւն քահանայ ՊՕՊՕՎԵԱՆՑԻ աշխատասիրութեան «Պատմութիւն Նոր Կտակարանի, հանգիւրձ կարեւոր բացատրութեամբ և Պաղեստինու աշխարհացոյցով» երկրորդ հատորը: Գինը 60 կոպէկ է: Գրափառաներին զիջումն կը լինի: Գիւմր. «Въ Москву, домъ Армянской церкви, священнику Артемію Попову. 3—3 (1)

Չը նայելով մաքրելի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն ԿՕՆԳՕ-ԹԻՑ 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լուս ՄՕՆԻՆԳ 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի ԿԱՅՍՍԱՈՒ 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և ԱՄԵՆԱԼԱԻ ԹԻՑ 2 ր. առանց թղթի: Անգլիական թէյօլիներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200 ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն ԲԱՐՆԱՅԻ ԹԱՄԲԵՐԸ, ջմաստի կՈՂՊԵՔԵՐԸ, ճարտարի ԳՐԻՉՆԵՐԸ և կիտրակա կակօշօրյարի ծախելու համար, որոնք վարիցի հանգիստի ժամանակ ոսկէ մեզու ստացան: ՀՈՏԱԻՑ ԹԻՑԻ ԳՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. և ամենայլը 2 ր. 30 կ.: Վ ամառականներին օգտուէն է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կոնֆեկաներ հազի զէմ 60 կ. ֆուստը: 30—100

- Կենտրոնական գրափառանոցում ի միջի այլոց փաճափում են հետևեալ գրքերը:
1. Արուեստ երկայնակեցութեան, որ է սոսոջ, երկայն ու երջանիկ ապրելու ուսումը: Շար. բժ. Փոփոլիչ. գ. 1—50 կ.
 2. Մօրիս կամ աշխատութիւն, ի պէտս նախնական դպրոցաց: Հեղ. ա. Գառառ, գ. 1 ա.
 3. Հռչակաւոր ոճիքը: Պրէնկիլիէ Մարքիզուհին: Պատկեր. վէպ. Ա. Գիւմր գ. 1 ա.
 4. Գիւտարակ բլուր: Վէպ. Էթէն Սիւ 2 հ. գ. 2 ա.
 5. Խորհրդաւոր կղզի: Հեղ. Ժիւլ Վէրն 3 հ. բովանդակութիւն ա. հ. Օղապար նաւարկիւր. բ. հ. Ընկեցիկ մարդը. գ. Կղզոյն Գաղանիքը գ. 3 ա.
 6. Աշխարհի շրջան ութսուն օրուան մէջ: Հեղ. Ժիւլ Վէրն գ. 1—50 կ.
 7. Բարիկի Սմերկա: Հեղ. Է. Լաբուլէ 2 հ. գ. 2 ր.
 8. Պարոյր կամ առնուած Նինուէր. դրեաց ծեր. Գ. Պատկանեան գ. 50 կ.
 9. Թուղթ Մարիուր Աղաբէգեան Հայոց Աշխարհի Ազգի և եկեղեցու, ազգայնութեան մասին առ պատուականաց պատուական տէր Ներսէս Պատրիարքն հայոց գ. 2 ր. 25 կ.
 10. Հ. Ղ. Ալիշանեան: Տեղագիր Հայոց Մեծաց գ. 2 ր. 50 կ.
 11. Նուէր Կաղանի: Պատկերազարդ մանկանց ընթերց. Նշան Պերպէրեանի գ. 65 կ.
 12. Քնարիկ մանկան. Աղէք. Արարատեանցի գ. 40 կ.
 13. Տարերք իմաստասիրութեան, ընդարձակ Հ. Ա. Վ. Գուրգենեան 5 հատոր գ. 3 ր. 50 կ.
 14. Խորհրդական բերդը: Վիպասանութիւն Ֆօթեր օր. Գաղիացուց գ. 1 ր.
 15. Ընտիր Հայկազունը: Պատկերազարդ կենսագրութիւնը գ. 2 ր. 75 կ.:
- Նոյն տեղը փաճափում են հայերէն, սուսերէն և օտար լեզուների դասագրքեր, դասական պիտոյքներ, աշխարհագրական քարտէզներ, նկատողական ուսման համար պատկերներ, վիպասանութիւններ, թատրոնական պիէսներ, ուղեցոյցներ, բառարաններ, տեղեկացոյցներ և այլն:
- Օտարաքաղաքացիք իւրեանց պահանջները փողի հետ պիտի ուղարկեն հետևեալ հասցեիւ. Կիշնէօվ, Վ. Մատենսէ, Ն. Մատենսէ յսի մօտ, Տվերակայա փողոց: Կիշնէօվի մէջ Կայուշանսկու և Բրայունշտէ յսի մօտ: Վարչակայի մէջ Ա. Փ. Գալչէի մօտ: 10 կ.:

ԱԼԼԻՑԵԼԵՆ ԵՏԵՄ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՏԵՄՆԵՐՈՅԺ ԲԺՇԿԻ Լ. Ե. ԻՂԵԼ ՀԵՑԻՄԻ Թոյլ են տուած Մօսկվայի ԲԺՇԿԵԼԵՆ ՖԵԿՈՒՄԻՏԵՑԻՑ: Եյդ միջոցները մեծ ԳՈՐԾԵՂԻՈՒԹԻՒՆ ԵՆ գտել և առաջարկվում են իբրև ԱՄԵՆԱԼԱԻ առողջապահական ՄԻՋՈՑՆԵՐ բերանի և առամներին համար: Կարելի է ԵՏԵՄՆԵՐԸ պահպանել ՓՕՇԻՆԵԼՈՒՑ, ստուգնում են ԼՕՐՉՈՒՆԻԹԻ ԲԵՐԸ և փատ ՀՈՏԻ առաջն են առնում:

Ետամնարոյժ բժիշկ Ե. Ե. Եղիսէյի ԳԼԽԵԼՈՐ ՊԵՆՍԵՐ զանվում է ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒՑՆԵՑԿԻ ԿԵՄՈՒՐԸ, ՍՕԿՕԼՕՎԻ տանը:

ԹԻՖԻՍՈՒՄ կարելի է գտնել Ե. Մ. ՑՈՒՐԻՆՕՎԻ ԿՈՎԿԵՍԵՆ և անդրկովկասեան գլխաւոր ՊԵՆՍՈՒՄ: Ծախողներ ՆԵՆՆԵԼՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ: 9—30 (11)

ՍԵՐՄԵՐ պարտիկ բոյսերի և ԾԱՂԻԿՆԵՐԻ բոլորովն թԱՐՄ ստացված են Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան գործակատարի խանութի մէջ: Գօլօվնսկայա փողոց № 11: ԼԱՐՇԷԻ խանութ: Սիրմերի ցուցակները ձրի են արվում: 1—10

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ամեն տեսակ ԳՈՐԾԻՔՆԵՐ մինչև Ապրիլի 20 փաճափում են շատ էփան գնով: Հարցնել կենտրոնական Գրափառանոցում (Արծրոնու գալչէրէյում): 1—3